Տ. ԳԵՈՐԳ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԱՐՈՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՈՐԱՎԱՐՆԵՐԻ ԵՒ 1036 ՎԿԱՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(07 հունվարի, 2013թ.)

«Բազումք ասէին զանձնէ իմմէ, թէ չիք փրկութիւն տորա առ Աստուած յուր:
Այլ դու Տէր օգնական իմ ես, փառք իմ եւ բարձրացուցիչ գլխոյ իմոյ»
(Սաղմ. Գ. 3-4):

Սիրելի բարեպաշտ քույրեր եւ եղբայրներ,

Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու խորաններից այսօր վերսփին աղոթք եւ գոհաբանություն է բարձրանում Սրբոց Վարդանանց նահատակների անմահ հիշատակին: Աշխարհով մեկ սփռված հայությունն այսօր շտապում է եկեղեցի իր հարգանքի փուրքը մատուցելու Ավարայրի դաշտում ընկած 1036 վկաներին, խոնարհվելու նրանց ոգու արիության, հավատքի ամրության առջեւ, վերանորոգելու ուխտը սեփական պատմության, մայր եկեղեցու եւ լեզվի հանդեպ, երդվելու Վարդանանց գաղափարի կրողը լինել:

Մանավանդ, հայրենիքից հեռու, սփյուռքի գաղթօջախներում բնակվող մեր քույրերի եւ եղբայրների համար յուրահատուկ նշանակություն ունի այս օրը, մի այլ հուզումով են նրանք պատրաստվում այս տոնին, կարծես Վարդանանք նրանց ավելի են մոտեցնում իրենց արմատներին, օգնում ավելի խորը գիտակցելու սեփական ինքնությունը, հասկանալու հայրենիքի եւ հավատի արժեքը, լսելու արյան կանչը:

Վարդանանց պատմությունն այն բացառիկ իրադարձությունների թվին է պատկանում, որը միավորող նշանակություն ունի աշխարհասփյուռ հայ ժողովրդի համար, տալիս է նրան ինքնության գիտակցություն եւ կամք: Մեր հավաքական գիտակցությունն այնքան վառ եւ նպատակասլաց է ատահայտվել Վարդանանց շարժման մեջ, որ դարեր շարունակ այն ներշնչման անսպառ աղբյուր է ծառայել սերունդների դաստիարակության, քրիստոնեական նկարագրի կերտման համար:

Սիրելի բարեպաշտ քույրեր եւ եղբայրներ, պատմության ընթացքում դարեր շարունակ Հայոց եկեղեցու բեմերից ոգեշունչ քարոզներ են հնչել Վարդանանց տոնի առիթով, հայ միջնադարյան պատմիչներն ու շարականագիրները դրվատանքի բազում խոսքեր են ձոնել սուրբ վկաների հոգեւոր սխրագործությանը, հորդորելով Վարդանանց հավատքի ոգին դարձնել մեզ պատգամ եւ ուղեկից: Վարդանանց պատմությունն այլեւ ներշնչման աղբյուր է դարձել հայ ազատագրական մտքի վերազարթոնքի շրջանում, մտավորական գործիչներ բազում բանաստեղծություններ եւ հայրենասիրական երգեր են ձոնել նրանց քաջության առաքինության գովերգմանը: Այսպիսով՝ Վարդանանց վկայությունն ուղեկից է եղել մեզ պատմության քառուղիներում, ներշնչել եւ ուղղորդել է մեր ընթացքը, քանի որ ինչպես հայ նշանավոր գրողն է ասում, «պատմությունը գիրք չէ, այլ ոգու պատմություն»: Վարդանանց պատմությունը հենց այդ «ոգու պատմությունն» է, որն ամեն տարի շարունակ վերապատմում ենք, հիշելով, թե ինչ որոշում կայացրեցին հայ իշխանները Վարդան

Մամիկոնյանի գլխավորությամբ, ինչպես էր հայ հոգեւորականը զինվորին հավասար սուրը ձեռքին մարտնչում թշնամու դեմ, ինչպես հայ փափկասուն կանայք քաջությամբ հետ չմնացին իրենց ամուսիններից:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, ի՞նչ փվեց մեզ Վարդանանց շարժումը հարցին շատերն են պատասխաններ առաջարկել պատմության ընթացքում, տարբեր տեսանկյուններից մեկնաբանել այն: Ես կցանկանայի միասին հիշեինք այն պատմական իրավիճակը, որի առջեւ հայտնվել էր հայ ժողովուրդն այդ ճակատագրական պահին, ապա ասել ձեզ այսօր, թե էլ ինչ փվեց մեզ Վարդանանց վկայությունը, ինչ է սովորեցնում մեզ նրանց գաղափարը, ոգին ու կամքը:

Ե դարը հայ ժողովրդի համար միաժամանակ մեծ ձեռքբերումների եւ ճգնաժամերի մի շրջան է իրենից ներկայացնում, մի կողմից հայոց այբուբենի գյուտ, սեփական մշակույթի ստեղծում, քրիստոնեական ինքնության վերակերտում, մյուս կողմից ներքին դավաճանություն, պետականության կորուստ, պարսկական տիրապետության հաստատում, հարկերի ավելացում, հավատքի հալածանք, անօրինական բռնություն եւ ջարդ: Ստեղծված ճգնաժամն առավել խորանում է Պարսից Հազկերտ երկրորդի՝ հայերին ներկայացված հավատափոխության արմատական պահանջով: Ազգի ինքնությունը վիճարկող նման բռնության դրսեւորումը բացահայտ կասկածի տակ էր դնում հայ ժողովրդի հոգեւոր պատկանելության հարցը, այլեւ գոյության իրավունքն առհասարակ, այն ուղղված էր որոշակի ցեղի կենսագործունեության դեմ: 449 թ. Արտաշատի հայտնի ժողովով հայ նախարարներն ու հոգեւորականները համախոհուրդ գրավոր մերժում են Պարսից արքունիքի պահանջը: Հազկերտին ուղղված պատմական այդ փաստաթղթում լավագույնս սահմանված է, թե ինչ է քրիստոնեությունը հայ ժողովրդի համար, ցույց է տրված այն գոյաբանական կապը, որը հայությունն ու քրիստոնեությունը չի բաժանում իրարից, դրանք դիտում է օրգանապես նույնական, «գոյն մորթոյ...», հռչակում է նամակը: Այլ խոսքով՝ինչպես կարող ենք ուրանալ մեր հավատը, երբ ժառանգել ենք այն մեր բնության հետ, ինչպես որ անհնար է փոխել սեփական մաշկի գույնը, այնպես էլ անհնար է հրաժարվել քրիստոնեությունից: Ցավոք հայոց միաբանության այս ոգին հետագա իրադարձությունների զարգացման արդյունքում ջլատվում է Վասակ Սյունու եւ նրա համախոհների հայտնի դավաճանության պատճառով, բայց Վարդանանք մնում են անհախտ իրենց ընտրության, համառ՝ իրենց կեցվածքի մեջ: 451 թ. հայոց 60.000 զորքն Ավարայրի դաշտում կենաց ու մահու կռվի է ելնում Պարսից 300.000 բանակի դեմ: Ոչինչ եւ չի պահում Վարդանանց այս անհավասար պայքարից, թեեւ թվով փոքր էին, սակայն հավատով միաբան, խորությամբ գիտակցում էին, որ իրենց կյանքի գնով են հատուցելու այդ ընտրության դիմաց, սակայն հասկանում էին, թե ինչ նշանակություն ունի իրենց զոհողությունը ինչպես ներկայի, այնպես էլ ապագայի համար, այդ պատճառով քաջաբար հայտարարում էին, «մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն», հանուն անմահության էին կռվում, ընդունում գիտակցված մահը, ոչ միայն սեփական անմահության, այլեւ համազգային մեծ անմահության համար:

Ավարայրի պատերազմին հաջորդող հետագա ազատագրական պայքարը Պարսից վերջնականապես համոզեցին հրաժարվելու իրենց մտադրությունից, կնքվեց հաշտության պայմանագիր, վերականգնվեց նախկին կարգը: Սահակ-մեսրոպյան շարժումն իր բնա-

կանոն հունի մեջ մտավ, կերտվեց հայոց հավիտենական ներշնչման աղբյուր ոսկե դարը, հաղթեց հավատքն ու ոգին, ինչպես ավետարանիչն է ասում «Եվ Բանն մարմին եղեւ եւ բնակեաց ի մեզ եւ տեսաք զփառս նորա լի շնորհօք եւ իմաստութեամբ»:

Սիրելի բարեպաշտ հայորդիներ, պատմագիտության մեջ շատ են քննարկել այն հարցը արդյոք Ավարայրի պատերազմը հաղթանակ էր, թե պարտություն, ոմանք հակված են այն զուտ բարոյական հաղթանակ դիտել, ոմանք կարծում են, որ խոսք չի կարող լինել հաղթանակի մասին: Պատմական իրադարձությունների ամբողջական վերլուծությունը փաստում է, որ այն միանշանակորեն հաղթանակ էր, ոչ միայն պատմական տվյալ ժամանակաշրջանի համար, այլեւ հետագա բոլոր դարերի հայ ժողովրդի մեծագույն հաղթանակը: Պատահական մի համարեք այն իրողությունը, որ մեր թշնամիները մինչեւ օրս զանազան միջոցներով ձգտում են մեր մեջ պառակտում սերմանել Վարդանանց հարցում, տկարացնել մեր հավատքը նրանց ոգու նկատմամբ, սա նշանակում է, որ նրանք խորությամբ գիտակցել են, թե ինչ է տվել հայ ժողովրդին Վարդանանց շարժումը: Թող լավ իմանան բոլոր թշնամիները եւ այն կեղծ գիտնականները, որոնք գայթակղվելով արծաթի փայլով՝ անցնում են Վասակյանների կողմը, որ Վարդանանց կամքը հավիտյանս մեր ուղենիշն է լինելու, մեր «Գիրք ճանապարհին», դրա մեջ է թաքնված մեր համառ ստեղծագործական ոգին, վերածնության ուժը, իսկ Վարդանանց հասցեին նրանց հնչեցրած կեղծ քննադատությունը, ինչպես մեծ բանաստեղծը կասեր՝ «Չնչին, ինչպես Արարատին նետած քար»:

Սիրելի բարեպաշտ քույրեր եւ եղբայրներ, ո՞րն է Ավարայրի պատգամը մեզ: Հայ պատմագրության մեջ Ավարայրի ձեռքբերումը լավագույնս արտահայտել է հայ ոսկեդարյան գրականության ականավոր ներկայացուցիչ, Մայր Աթոռի միաբան Ղազար Փարպեցի վարդապետն իր «Հայոց պատմութիւն» աշխատության մեջ: Ահա թե ինչ է պատգամում մեզ նշանավոր վարդապետը Ավարայրին հաջորդող ազատագրական պայքարի նախօրեին ուխտապահ հայ նախարարների բերանով. «Բայց մենք մեր հույսը ոչ հոռոմների վրա ենք դրել, ոչ հոների, այլ նախ Աստծո ողորմության վրա, որ պիտի լինի սուրբ Գրիգորի բարեխոսությամբ, այն նախնիների մահվան վրա, որ իրենց նահատակությամբ հաճո եղան Փրկիչ Քրիստոսին, եւ ապա մեր սեփական մահվան վրա»: Ամենակարեւոր դասը, որ Վարդանանց պատմությունից քաղում ենք, այն է, որ մեր հույսը չդնենք որեւէ մեկի վրա, այլ ապավինենք Աստծուն եւ մեր ուժին, իսկ մեր ուժը մեր միասնականության մեջ է: Պատմությունը միանշանակ ցույց է տալիս, որ երբ մեր հույսը դրել ենք դրսի օգնության վրա, մեր կորուստը կրկնակի է եղել: Ի տարբերություն դրա՝ մեր բոլոր հաղթանակները պայմանավորված են եղել այն բանով, թե որքան զորավոր է եղել միասնականության ոգին մեր մեջ, իզուր չէ ասում բանաստեղծը. «Ով հայ ժողովուրդ քո ուժը քո միասնականության մեջ է»: Ղազար Փարպեցու խոսքերը բոլոր ժամանակներում ճշմարիտ գաղափարախոսություն է հայ ժողովրդի համար, հաղթանակի ուղի, հարատեւության երաշխիք: Ահա այս գիտակցությամբ են մեր հայրերը մաքառել հանուն համազգային մեծ երազանքի՝ անկախ քրիստոնյա Հայաստան կերտելու ճանապարհին: Նույն ոգին է ուղեկցել մեզ Սարդարապատում եւ Արցախում, մեր առաջադրանքն է միշտ վառ պահել այս կրակը հայ հոգիների մեջ, հավատարիմ մնալ նրան մինչ ի լրումն ժամանակաց, որպեսզի սաղմոսերգուի նման բարձրագլուխ պարծենանք. «Այլ դու Տէր օգնական իմ ես, փառք իմ եւ բարձրացուցիչ գլխոյ իմոյ» (Սաղմ. Գ. 4):